ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՍԱՐԻԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028 թթ.

Լավ դասատու լինելու համար հարկավոր է սիրել այն, ինչ դասավանդում ես, և սիրել նրանց, ում դասավանդում ես: ՎԱՍԻԼԻ ԿԼՅՈՒՉԵՎՍԿԻ

Կրթության ամբողջ նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է: ՍԻԴՆԵՅ Ջ. ՀԱՐԻՍ

2023

Оглавление

ՆԱԽԱԲԱՆ 3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ 4
ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ 7
ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 14
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 16
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 19
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ 24
Դպրոցի զարգացման նախընտրելի ուղղությունները 27
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 28
Մանկավարժական համակազմի որակական բարելավումը 29
Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական նպատակներն ու խնդիրները, կատարողներն ու ժամանակացույցը 31
Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը 48
Ակնկալվող արդյունքները 50
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 51
Եզրափակում 53

ՆԱԽԱԲԱՆ

Որակյալ բարձրագույն կրթության ապահովումը ամենակարևոր բաներից մեկն է, որ մենք կարող ենք անել ապագա սերունդների համար:

Բոլոր ժամանակներում կրթությունը պետության զարգացման և կայունության համար առանցքային և գերակա է համարվել, կրթել սերունդներին, նշանակում է ապահովել հուսալի ապագա թե պետության և թե աշխարհի համար:

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Շիրակի Մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակվել է ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագրին» համապատասխան՝ հաշվի առնելով կրթական հաստատության ներուժը և առանձնահատկությունները, մանկավարժական համակազմի ձեռքբերումները և դպրոցում առկա խնդիրները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Հաստատության անվանումը, համարը՝ Շիրակի Մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Պետռեգիստրի վկայականի գրանցման համարը՝ 5521000408, **Վկայականի համարը՝** 05802882

Ծածկագիր՝ 100013258

Հասցեն՝ — Շիրակի մարզ գյուղ Մեծ Սարիար 5/2

հեռախոսահամարը՝ +37498190290

Հարկայնություն՝ 1

Նախատեսված աշակերտների տեղերի քանակը (Լրացվում է ԿՏԱԿ-ի կողմից՝ 167

Փաստացի հաճախող երեխաների թիվը՝ 42

Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը՝ 1996

Շենքի ընդհանուր մակերեսը, մ^2՝ 1182.41

Շենքի ներսի մաքրվող մակերեսը, մ^2՝ 1125.70

Դպրոցը համայնքի տարածքում միակն է /լրացվում է ԿՏԱԿ-ի կողմից,

Հեռավորությունը ամենամոտ դպրոցից /մոտակա բանուկ ճանապարհով, կմ-ով՝ 1.50,

Նկուղային հարկի ընդհանուր մակերեսը ՝ չունի նկուղ

Էլեկտրոնային հասցեն՝ mecsariar@yahoo.com

Նախագծային հզորությունը՝ 150

Դպրոցի շենքի տիպը՝ տիպային

Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի՝ միջնակարգ(1-12- րդ դասարաններ)

Աշխատանքային շաբաթ՝ 5- օրյա

Աշխատանքային ռեժիմ՝ միահերթ

Կազմակերպական իրավական ձևը՝ պետական

Ենթակայություն՝ մարզային

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր: Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

«Շիրակի մարզի Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ը պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Հարկայնությունը՝ մեկհարկանի: Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց :Առանձնասենյակների թիվը՝ 3: Դասասենյակների թիվը՝ 14 :Առարկայական սենյակ /կաբինետ՝ 8 :Համակարգչային կաբինետ ,ինտերնետ կապ առկա է :Մարզադահլիճ չունի,գործում է հարմարեցված սենյակ: Գրադարանի ֆոնդը՝ 700 կտոր գիրք: Գործում է«Արմաթ» լաբորատորիա:

Դպրոցը հիմնվել է 1961 թվականին: Դպրոցում աշխատում է 15 ուսուցիչ, որոնցից 13-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, 2-ը՝ միջին մասնագիտական/միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչները մասնակցել են կամավոր ատեստավորմանը՝ հաղթահարելով անհրաժեշտ շեմը, ստանում են հավելավճար/: Ուսուցչի օգնական՝ 1, հոգեբան՝ 1: Դպրոցի աշակերտների թիվը 42-ն է: 1-ին դասարանում սովորում են 3 աշակերտ ,2–րդ դասարանում սովորում են 6 աշակերտ, 3–րդ դասարանում սովորում են 6 աշակերտ, 4 –րդ դասարանում սովորում են 5 աշակերտ, 5 –րդ դասարանում սովորում են 3 աշակերտ, 6 –րդ դասարանում սովորում են 4 աշակերտ,7–րդ դասարանում սովորում են 3 աշակերտ, 8 –րդ դասարանում սովորում են 3 աշակերտ, 9 –րդ դասարանում սովորում են 4 աշակերտ, 10 –

րդ դասարանում սովորում են 2 աշակերտ, 11 –րդ դասարանում սովորում է 2 աշակերտ, 12 –րդ դասարանում սովորում է 1 աշակերտ:

Կոմպլեկտավորված են 1-4-րդ, 8-9-րդ,10-11-12-րդ դասարանները;

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես
օգագործել աշխարհը փոխելու համար:
ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ

Վաղվա օրը ձևավորվում է այսօր. առողջ սերունդ քաղաքացիական առողջ հասարակության համար:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է՝ Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի՝

1) մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը.

2) մարդկային արժանապատվության պահպանմանը.

3)իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը.

4) ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը.

5) մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը.

6) ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը.

7) որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

Միջնակարգ դպրոցի առաքելությունը իր սովորողներին ազգային հենքի վրա եռաստիճան որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել նախնական մասնագիտական (արհեստագործական), միջնակարգ–մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Միջնակարգ կրթությունը պարտադիր է: Միջնակարգ կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, որը չի

տարածվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների որոշակի խմբի վրա, որը սահմանում է ՀՀ կառավարությունը: Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խնդիրն է ուսումնադաստիարակչական հարցերում ապահովել սովորողակենտրոն մոտեցում՝ ներդաշնակորեն համադրելով ուսուցման ավանդական և արդիական մեթոդների կիրառումը: Դպրոցը պետք է ապահովի կրթության որակ, միջնակարգ կրթության չափորոշիչներով նախատեսված գիտելիքների իմացություն, կարողություններ և հմտություններ /այդ թվում՝ ճանաչողական, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և արժեքային համակարգ/:

Մարզի դպրոցների մեջ դպրոցը պետք է լինի ճանաչված ինչպես իր սովորողներով, այնպես էլ կրթության բովանդակության ապահովմամբ, օրինակելի ուսումնական գործընթացով, դրա անխափան ընթացքով, համապատասխան սովորողակենտրոն ուսումնական միջավայրով և շրջանավարտների հաջողություններով: Դպրոցը պետք է զարգացնի յուրաքանչյուր սովորողի բնատուր ունակությունները՝ ուսուցումն իրականացնելիս շեշտադրում կատարելով ոչ թե մի քանի <<բացառիկ>> ընդունակների ,այլ սովորողների հիմնական զանգվածի վրա ՝ուշադրության կենտրոնում պահելով թույլ առաջադիմություն ունեցող կրթական պահանջների բավարարման խնդիրները: Դպրոցը պետք է վստահի սովորողներին,խրախուսի նրանց հասարակական հանրօգուտ գործունեությունը և օժանդակի սովորողների նախաձեռնությունների իրագործմանը: Դպրոցը պետք է ձևավորի սովորողի ֆիզիկական,հոգևոր կարիքների համակողմանի բավարարման յուրօրինակ մշակույթ:

Այս առաքելության իրականացման ճանապարհին որպես ելակետ ընդունում ենք զարգացման սույն ծրագիրը, որը ենթադրում է աստիճանական իրականացում:



Դպրոցի առաքելության իրականացման համար կարևորում ենք հետևյալ խնդիրները.

Դպրոցը պետք է ապահովի որակյալ կրթություն:

Դպրոցը պետք է ապահովի կրթական բարենպաստ միջավայր՝ ազգային, համամարդկային բարոյական արժեքների վրա հիմնված կրթություն և դաստիարակություն ստանալու համար:

Դպրոցը պետք է բացահայտի սովորողի ունակությունները, տաղանդը և ապահովի նրա անընդհատ զարգացումը:

Դպրոցում աշակերտը պետք է սովորի սովորել և դպրոցում գտնի դրա բանալին:

ՍԿԻԶԲ, ՈՐ ՎԱԽՃԱՆ ՉՈՒՆԻ ...



ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Համաձայն ՀՀ «Կրթության մասին» օրենքի՝ կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է: Դպրոցի զարգացման ծրագրի կառուցման համար հիմք են հանդիսացել.



Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սարիար միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) ստեղծվել է 1961 թվականին: Այն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական տարրական և հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցն, ըստ կրթական մակարդակների իրականացնում է տարրական և հիմնական հանրակրթական ծրագրեր, որոնց շրջանակներում, համաձայն հաստատության կանոնադրությամբ ամրագրված գործառույթների, իրականացված աշխատանքների նպատակն է՝ սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության պահանջմունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է: Դպրոցի գործունեությունը հիմնված է ժողովրդավարության, մարդասիրության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության, աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա: Տարիների ընթացքում դպրոցը ձեռք է բերել և շարունակում է պահպանել բարձր հեղինակություն հասարակության լայն շրջանում, ունի բոլոր ռեսուրսները որակյալ կրություն ապահովելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ուսումնական միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ է տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Այսպիսով՝ շատ կարևոր է ունենալ հարմարավետ, գրավիչ, մոտիվացնող ուսումնական միջավայր:

Ուստի, դպրոցի 2023-2028 թվականների զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր, որոնք միտված են ամբողջացնելու նկարագրված ուսումնական միջավայրը: Այժմ դպրոցում ստեղծված է այնպիսի ուսումնական միջավայր, որը տեխնիկապես հագեցած է,սակայն հնարավորություն չի ընձեռում ամբողջությամբ ինտերակտիվ, փոխներգործուն մոտեցումների, մեթոդների կիրառման համար: Դպրոցում չկան սովորողի նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր: 2023 թվականից նախատեսվում են դպրոցում իրականացնել տարբեր մոտիվացնող և ուսումնական պրոցեսը խթանող տարբեր միջոցառումներ:

Աղյուսակում ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	
Ուժեղ կողմ Տնօրենությունը և մանկավարժական համայնքը սահմանել են երեխայի բարձրարժեքության և մանկության բացառիկության գաղափարը, և առաջնորդվում են այս գաղափարները հաշվի առնելով	*Թույլ կողմ* Ժամանակակից էլեկտրոնային գրադարանի լաբորատորիաների բացակայություն
Լուսավոր ու մաքուր կահավորված դասասենյակներ	Առարկայական կաբինետների բացակայություն
Բազմափորձ ու հմուտ մանկավարժներ	Համագործակցություն այլ դպրոցի նույն տարիքի սովորողների հետ մրցույթների, բանավեճերի , քննարկումների միջոցով, որը նպատակ կա իրականացնել նոր ուս տարում

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար ուսումնասիրելով դպրոցի ողջ տեղեկատվությունը վեր են հանվել դպրոցի ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու հնարավոր խոչընդոտները՝ այն ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել խնդիրների լուծման ընթացքում:

Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	*ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ*
✚ աշխատանքի բազմամյա փորձ ունեցող, աշխատանքում հետևողական, արհեստավարժ ա նձնակազմ, ձևավորված թիմ	❖ ուսուցչի հասարակական ցածր վարկանիշ
✚ համագործակցային և թիմային աշխատանքի իրականացում	❖ երիտասարդ, արհեստավարժ ուսուցիչների դպրոցում աշխատելու ցանկության նվազում, մանկավարժական կոլեկտիվի ծերացման միտում
✚ կառավարման ժողովրդավարական ոճ	❖ նյութական կարիքի գործոնը՝ որպես

	մոտիվացնող հիմնախնդիր
✚ բարձր կարգապահություն և պատասխանատվություն	❖ ֆիզկուլտուրայի և սպորտի նկատմամբ հետաքրքրության անկում
✚ մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ	❖ կախվածություն հեռահաղորդակցման միջոցներից, որն առաջացնում է ուշադրության և լսելու հետ կապված խնդիրներ, ընկալելու, վերարտադրելու դժվարություն, ադեկվատության նվազում:Մեդիակրթության պակաս
✚ անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված բարձրորակ մանկավարժ մասնագետներ, ստեղծագործ ուսուցիչներ	❖ անառողջ սովորությունների աճ
✚ բարձր պատասխանատվություն	արտաբյուջետային միջոցների բացակայություն կրթությանը հատկացվող

	նյութական միջոցների անբավարարություն
✚ աշխատանքից բացակայությունների ցածր տոկոս	❖ երկրում կրթության վարկի նվազում
✚ մարդկային բարձր որակներ	❖ սովորողների անհարկի շփում սոցիալական ցանցերի միջոցով
✚ աշակերտակենտրոն մոտեցում, սովորողի հաջողության կարևորում և գնահատում	❖ ուսուցչի աշխատանքի ցածր վարկանիշ, վարձատրություն
✚ Աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք	❖ համացանցային տարբեր վտանգներ
✚ ուսման նկատմամբ դրական վերաբերմունք	❖ հետպատերազմյան դժվարություններով պայմանավորված՝ բարոյահոգեբանական խնդիրներ
✚ հիմնավոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերում	❖ Դպրոցի նյութատեխնիկական անբավարար բազա
✚ ուսուցիչներին տրված բարձր գնահատական	❖ Շնորհներով օժտված երեխաների համար բացակայում է տարբեր խմբակներ(երգ, պար, օտար

	լեզուների ուսուցում և այլն) բացելու հնարավորությունը
✚ անհարգելի բացակայությունների բացառում	❖ • ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման մակարդակը:
✚ տաղանդավոր և սեփական վաստակի ձգտող երեխաների կտրուկ աճ	❖ Չկան ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած լաբորատորիաներ, նյութեր:
✚ դպրոցի նկատմամբ սեր և կապվածություն	❖ Չկան առարկայական կաբինետներ, ունեցած նյութատեխնիկական բազան հին է:
✚ պատշաճ աշակերտական տեսք	❖ Դպրոցում սպորտդահլիճ ու մարզագույք չկա
✚ սանիտարահիգիենիկ պայմաններիապահովում	❖ Դպրոցում բնագիտական առարկաների ուսուցման հետ կապված գործնական պարապմունքների իրականացման համար լաբորատոր սարքավորումների, փորձանոթների, քիմիական նյութերի և ընդհանրապես կաբինետային սիստեմի

	բացակայությունը չի նպաստում ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ուսուցման որակի բարելավմանը:
✚ սերտ համագործակցություն ծնողների հետ	❖ Գրադարանն անբարեկարգ վիճակում է:Պատշաճ կահավորված չէ: Գեղարվեստական և մասնագիտական գրքերով համալրման կարիք ունի:
✚ դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում	❖ ϖ Դպրոցը չունի ապաստարան
✚ Աշխատավարձի ժամանակին վճարում	❖ Չունի ջեռուցման արդարացնող համակարգ

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառացած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, կրթօջախի առաջընթացին՝ առաջնորդվելով հանրակրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների պահանջներով: Դպրոցի զարգացման ծրագրի նպատակն է պետության, հասարակության և անհատի զարգացման առաջնահերթություններից բխող բարձրակարգ կրթության և դաստիարակության ապահովմանը նպատակաուղղված համակողմանիորեն զարգացած, հայրենասեր և մարդասեր անհատի ձևավորումը՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները շարադրվել են՝ հիմնվելով մի քանի ելակետային դրույթների վրա: Կրթության առաջընթացի հիմքում դնել «Սովորեցրու, որ սովորես» կարգախոսը:

Յուրաքանչյուր սովորող ի վիճակի է յուրացնելու ցանկացած ուսումնական նյութ իրեն համար ճիշտ ընտրված մեթոդներով և ժամանակահատվածում:

- Ուսուցչական համակազմը դպրոցի հենքն է:
- Յուրաքանչյուր ուսուցիչ կարող է դառնալ լավագույնը:

  Ուսուցիչը սովորողին պետք է ճանաչի ավելի լավ, քան սովորողի ծնողը:

  Ծնող-սովորող-ուսուցիչ համագործակցությունը «լավ դպրոցի» հաջողության գրավականն է :

Ելնելով նշված նպատակներից, ինչպես նաև սովորողներին արդյունավետ ու արդիական կրթություն տալու անհրաժեշտությունից, պետք է՝

- ստեղծել նպաստավոր պայմաններ սովորողների առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեության համար

• սովորողների և մանկավարժների արդյունավետ գործունեության համար ստեղծել բարենպաստ պայմաններ

• ամրապնդել դպրոցի նյութատեխնիկական բազան

• ձևավորել դպրոցի առանձին առարկայական դասասենյակներ, տեսադասարաններ

• արդիականացնել դպրոցում կիրառվող տեղեկատվական համակարգերն ու ծրագրերը

• ներմուծել նոր կրթական տեխնոլոգիաներ, մոդելներ, ՏՀՏ գնահատման գործիքներ

• դպրոցն ապահովել որակական բարձր հատկանիշներով օժտված աշխատակազմով. համատեղ աշխատանքով աջակցել ուսուցիչների որակավորման տարակարգերի շնորհման գործընթացին, կամավոր ատեստավորման մասնակցության գործընթացին • կրթական գործընթացում մշտապես կիրառել ժամանակակից մեթոդներ

• նպաստել սովորողների իրավական գիտակցության ձևավորմանը և զարգացմանը

• սովորողների մոտ ձևավորել կրթության և ողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք և ձգտում

• ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր սովորող, այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կարողանա օգտվել իր հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայությունների դիմելու իրավունքից

• դպրոցի կառավարման համակարգը, ինչպես նաև ծնողների, ուսուցչական անձնակազմի ու սովորողների միջև հարաբերությունները հանրության համար դարձնել առավել թափանցիկ

• դպրոցի կառավարման գործում ակտիվորեն ներգրավել դպրոցի խորհրդակցական մարմիններին, հատկապես ծնողական և աշակերտական խորհուրդներին

• նպատակաուղղված աջակցել ծնող-սովորող-ուսուցիչ(դպրոց) փոխհամագործակցության ամրապնդմանը,

- ձեռնարկել միջոցառումներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կրթական գործընթացը բարելավելու նոր հաջողություններ արձանագրելու ուղղությամբ: Թվարկված խնդիրները լուծելու արդյունքում ակնկալվում է, որ դպրոցում՝

- կապահովվի արդիական և որակյալ կրթություն, որի արդյունքում կավելանա հայրենասեր, հաջողակ և մրցունակ շրջանավարտների թիվը

- կընդլայնվեն սովորողների՝ որպես անհատների կայացման համար անհրաժեշտ նախադրյալները

- սովորողները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու համար

- սովորողների մոտ կձևավորվի վերլուծական և քննադատական մտածողություն՝ ապահովելով ազատ քաղաքացու ձևավորումը

- կբարելավվեն ուսուցիչների մասնագիտական որակները, կմեծանա վերջիններիս գործունեության արդյունավետությունը, կմեծանան դպրոցի անձնակազմի յուրաքանչյուր անդամի կողմից դրական արդյունքներ դրսևորելու ցանկությունը և նախաձեռնողական որակները

Վերոնշյալ խնդիրները լուծելիս առաջնորդվել այն համոզմունքով, որ յուրաքանչյուր սովորող անհատ է, ուրույն իր տաղանդով և ունակություններով, և որպես այդպիսին, պահանջում է անհատական մոտեցում: Ուսուցման գործընթացին զուգահեռ պետք է մեծ ուշադրություն դարձնել արտադասարանական և արտադպրոցական ուսուցմանը՝ ստեղծելով պայմաններ սովորողների հետաքրքրությունների ու նախասիրությունների բավարարման, ստեղծագործական, նախաձեռնողական կարողությունների և կիրառական հմտությունների զարգացման համար:

Դպրոցի զարգացման նախընտրելի ուղղությունները

Դպրոցում հարկավոր է հաստատել հանրակրթության կազմակերպման հետևյալ սկզբունքները.

• Հանրակրթությունը պետք է իրականացվի ազգային հենքի վրա՝ համամարդկային արժեքների ներդաշնակ զուգորդմամբ:

• Հանրակրթությունը պետք է նպաստի մարդու և քաղաքացու ձևավորմանը, ծառայի անհատին ու ժողովրդին:

• Հանրակրթությունը պետք է իրականացվի ուսուցման և դաստիարակության միասնականության սկզբունքով՝ պահպանելովիր բնույթը, զերծ մնալով խտրականությունից ու սահմանափակումներից: Կրթություն ստանալը պետք է հավասարապես մատչելի լինի յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Հիմնական կրթությունը պետք է հասանելի լինի յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա հետաքրքրություններից, մասնագիտական նախնական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից՝ սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կրթության բովանդակային բաղադրիչներն են.



Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի՝ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ, և խնդիր է դրվել սովորեցնելու սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Այդ նպատակով անհրաժեշտ է սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ: Սովորողը պետք է գիտակցի սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային և այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը:

Դպրոցում հարկավոր է հաստատել հանրակրթության կազմակերպման հետևյալ սկզբունքները.



Կրթություն ստանալը պետք է հավասարապես մատչելի լինի յուրաքանչյուրին՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Հիմնական կրթությունը պետք է հասանելի լինի յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա հետաքրքրություններից, մասնագիտական նախնական կողմնորոշումից, մտավոր և ֆիզիկական կարողություններից՝ սովորողների տարիքային առանձնահատկություններին և զարգացման մակարդակին համապատասխան:

Մանկավարժական համակազմի որակական բարելավումը

Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է»: Ուիլյամ Ուորդ

Լավ դպրոցը լավ ուսուցիչն է, չէ որ նա աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն՝ լինելով դպրոցում ամենակարևոր երևույթը, ամենաուսուցանող առարկան, ամանալավ կենդանի օրինակը: Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման կարևորագույն օղակներից մեկը շարունակ ինքնակատարելագործման ձգտող և թիմային աշխատանքի պատրաստ ուսուցիչն է: Ուսուցչի բարդ և պատասխանատու ամենօրյա գործունեությունը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է

պայմաններ ստեղծել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության ամենօրյա կատարելագործման համար
երիտասարդ ուսուցիչների համար կազմակերպել որակյալ և գործուն օգնություն
շարունակել ուսուցիչների վերապատրաստումը, նպատակուղղել համակարգչային գիտելիքների և օտար լեզվի իմացության ամրապնդմանը
դպրոցում մանկավարժական առաջավոր փորձի փոխանակման համար կազմակերպել բաց դասեր, իրականացնել դասալսումներ և այլն
ապահովել ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածությունը
մանկավարժական գործունեությունը նպատակաուղղել յուրաքանչյուր սովորողի՝ սեփական մշակույթի, լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների և ազգային բարձր արժեքների կարևորության ու նշանակության, դրանց կրողը լինելու գիտակցության բարձրացմանը:
Ուսուցիչը պետք է մշտապես սովորեցնի պահանջիլինելհայրենասեր, գիտակցել սեփական տեղնու դերը ընտանիքում և հասարակության մեջ, հարգել մարդու իրավունքները, լինել աշխատասեր, անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները:

Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական նպատակներն ու խնդիրները, կատարողներն ու ժամանակացույցը

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է: Դպրոցի զարգացման հիմնական նպատակներն են՝

- Կրթության բնագավառում պետական քաղաքականության իրականացում:
- Աշակերտների կողմիցհանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացում:
- Ուսումնական բարեկեցիկ, անվտանգ միջավայրի ապահովում:
- Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնանյութական բազայի ապահովում:
- ՏՀՏ-ի կիրառման միջոցով ուսուցման արդյունավետության բարձրացում:
- Կրթության որակի բարձրացում:
- Սովորողների ինտեգրում հասարակական կյանքին, արտադպրոցական աշխատանքներին, ազգային, մշակութային, հայրենասիրական արժեքների ձևավորում, ամրապնդում:
- Ծնողների մասնակցության ապահովում սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին:
- Դպրոցի բարձր հեղինակության պահպանում :

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը: Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման և կառավարման արդյունավետությունը կախված է դպրոցի կարիքների գնահատումից, որոնք ոչ միայն կան, այլն առաջիկայում հայտնվելու են:

Դպրոցի յուրաքանչյուր ոլորտում առկա խնդիրները վերլուծելիս նպատակահարմար է եղած տվյալները առանձնացնել ըստ նպատակների կարևորության: Յուրաքանչյուր նպատակից բխող խնդիրները պետք է ուղղված լինեն պլանավորված ժամանակահատվածում դրական արդյունքների ձեռքբերմանը, լինեն իրատեսական, դպրոցի պայմաններին համապատասխան:




Նպատակ 2. Կրթական պահանջմունքները բավարարող ուսումնական միջավայրի ապահովում:
Խնդիր՝ Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում:
Գործողություններ՝ Դպրոցը համալրել էլեկտրոնային գրատախտակներով: Բնագիտական առարկաների կաբինետները հարստացնել լաբորատոր սարքավորումներով: Ստեղծել միջավայր և հնարավորություն լավագույն փորձի փոխանակման համար: Արդիականացնել ռազմագիտության դասասենյակը, ստեղծել ուսումնական նյութերի և օժանդակ գրականության էլեկտրոնային գրադարան:


Նպատակ 3 Սովորողների կրթական կառուցվածքի և բովանդակության վերազինում
Սովորողներին ծանոթացնել քննադատական մտածողության և ճանաչողական մեթոդներին ու ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ և հմտություններ: Սովորողների մոտ զարգացնել. ա. լեզվական կարողունակություն և գրագիտություն, բ. սովորել սովորելու կարողունակություն, գ. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակու-թյուն, դ. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն, ե. թվային և մեդիա կարողունակություն, զ. մշակութային կարողունակություն, է. մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն, ը. տնտեսական կարողունակություն
Սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքի իրացումը հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան :



Շարունակաբար կազմակերպել մշակութային, գրական, բնապահպանական, պատմահայրենասիրական միջոցառմներ, վիկտորինաներ, աշակերտական կոնֆերանսներ, բանավեճի կլոր սեղաններ, խրախուսել կազմակերպիչներին և մանկավարժներին

Ստեղծել աշակերտի անկյուն՝ համապատասխան սենյակով:

Բացահայտել շնորհալի սովորողներին, կազմակերպել ցերեկույթներ, միջոցառումներ, հայրենասիրության դասեր:

Նպատակ 5.

Դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում:
Խնդիր՝ • Սովորողների ուսուցման ն դաստիարակության արդյունավետ մեխանիզմների մշակում: • Ներդպրոցական վերահսկողության կազմակերպում, աշխատանքային կարգապահության ապահովում, համագործակցային փոխհարաբերությունների ամրապնդում:
Գործողություններ՝ • Ապահովել արտակարգ ընդունակություններ դրսևորած աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին, մրցույթներին, միջոցառումներին: • Ներդնել աշակերտների ստեղծագործական, հետազոտական, նորարարական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ՝ պատվոգրեր, պարգևներ, խրախուսման այլ ձևեր: • Զարգացնել ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման կարողություններն ու հմտությունները:

Նպատակ 6. Կրթության որակի բարձրացում:
Խնդիր՝ Կրթության մատչելիության ապահովում, սովորողների կարողություններին և ձգտումներին համապատասխան կրթական չափոշիչների յուրացում, որակյալ կրթության ապահովում:
Գործողություններ՝ • Ներդնել սովորողների գործնական հմտությունների զարգացմանն

ուղղվածուսուցման ժամանակակից մեթոդներ: • Ուսուցման գործընթացում կիրառել տեղեկատվականն հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներ: • Ապահովել ուսումնական պլանի համապատասխանեցումը սովորողների պահանջներին: • Կատարել սովորողների ուսումնառության արդյունքների շարունակական վերլուծություն: • Սովորողների գիտելիքների որակական գնահատումն իրականացնելու նպատակով դասապրոցեսին լայնորեն կիրառել ուսուցանող գնահատման բոլոր ձևերը:

Նպատակ 7 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարելավում, կատարելագործում:
Խնդիր՝ • Մանկավարժների պատրաստվածության և ինքնագնահատականի բարձրացում, ժամանակակից դասավանդման մեթոդների տիրապետում և կիրառում: • Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնում:
Գործողություններ՝ • Համադրել ավանդական և արդիական դարձած ուսուցման մեթոդները և ապահովել որակյալ ուսուցում: • Մանկավարժական առաջավոր փորձի յուրացման նպատակով իրականացնել համապատասխան աշխատանքներ (դասալսումներ, սեմինարներ և այլ): • Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական գիտելիքների,

աշխատանքային ունակությունների կատարելագործմանը նպաստող միջոցառումներ: • Ուսուցիչների ատեստավորման ապահովում:

Նպատակ 8 Կառավարման մարմինի դերի բարձրացում, համագործակցության բարելավում, օրենքով սահմանված կարգով գործունեության ընդլայնում:
Խնդիր՝ 1.Զարգացնել և խրախուսել կառավարման մարմինի և հաստատության տնօրենի միջև հանդիպումները, քննարկումները համագործակցության ամրապնդման նպատակով: 2.Կարևորել կատավարման խորհրդի դերը դպրոցի կառավարման գործում, զարգացնել մասնակցային գործընթացը: 3. Համագործակցության արդյունքում դպրոցի կառավարումը դարձնել ավելի արդյունավետ , տեսանելի և մասնակցային
Գործողություններ՝ ա) Մշտապես համագործակցել կառավարման խորհրդի հետ ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման գործում: բ) Ապահովել կառավարման խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, ներքին գնահատման աշխատանքներին գ) Ակտիվացնել նյութատեխնիկական բազայի հարստացման, դպրոցի

ցանկապատման ուղղությամբ խորհրդի աշխատանքները: դ) Ապահովել հաստատության տնօրենի, կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների հետ սերտ համագործակցությունը:

Նպատակ 9 1)Խորացնել համագործակցային և մասնակցային հարաբերությունները բոլոր ուղղություններով: 2)Խրախուսել և խթանել սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու գործընթացը, զարգացնել ակտիվ քաղաքացու կարողունակություն
Խնդիր՝ 1)Ընդլայնել համագործակցության շրջանակը (համայնքապետարան, ՀԿ-ներ, կրթական հաստատություններ, ծնողներ և այլն), 2)Զարգացնել սոցիալ-մշակութային դպրոցի գործունեությունը:
Գործողություններ՝ ա) Ակտիվ համագործակցել տարածաշրջանի ուսումնական հաստատությունների հետ, իրականացնել համատեղ ծրագրեր, սովորողների մոտ դաստիարակել կամավորություն, առաջնորդություն, մասնակցային արժեքներ: բ) Համայնքի հետ համատեղ ծրագրերի իրականացում սովորողների և ծնողների մասնակցությամբ (թղթի մակուլատուրա, շաբաթօրյակներ, ծառատունկ և այլն): Ձևավորել հոգատար վերաբերմունք համայնքի, շրջակա միջավայրի նկատմամբ: գ)Կազմակերպել տարաբնույթ էքսկուրսիաներ, գիտարշավներ

Հայաստանի տարբեր պատմամշակութային վայրեր, այցելություններ թանգարաններ, ցուցասրահներ, թատրոններ: Պետության կողմից տրամադրած դպրոցական աբոնենտային համակարգի կիրառումը՝ խթանելով դպրոց-մշակութային օջախ կապը, նպաստելով աշակերտների գեղագիտական դաստիարակությանը: դ)Անցկացնել հանդիպումներ, հյուրընկալություն, ցերեկույթներ, արվեստագետների ու արհեստագործ վարպետների, մշակութային գործիչների հետ, համագործակցել կրթության,մարդու իրավունքների պաշտպանության և այլ ՀԿ-ների հետ:

Նպատակ 9 Մանկավարժական համակազմի որակական և մասնագիտական կարողունակությունների բարելավում: Մրցունակ, մոտիվացված, կոմպետենտ անձնակազմի ձևավորում:
Խնդիր՝ 1) Կազմակերպել ուսուցիչների կատարելագործման և ինքնազարգացմանն ուղղված աշխատանքներ, 2)ապահովել դպրոցում մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պատշաճ պայմաններ, 3)ստեղծել վստահության, համերաշխության մթնոլորտ, 4) հետևել հաստատության աշխատողների բարեվարքությանը, սոցիալական արդարության պահպանմանը:
Գործողություններ՝ ա) Ուսուցիչների հետ քննարկել ՀՊՉ-ն և տալ պարզաբանումներ

նրանից բխող բովադակային, ծրագրային և մեթոդական փոփոխությունների մասին: Մանկավարժների ուսուցումն ու զարգացումը կազմակերպել ֆորմալ և ոչ ֆորմալ եղանակով:

բ) Մեթոդմիավորումների հետ համատեղ մշակել ինքնազարգացման և ինքնակրթության օրինակելի նմուշ, կազմակերպել և աջակցել ուսուցչի կատարելագործմանը:

գ) Աջակցել մանկավարժներին՝ մշակելու և տպագրության ներկայացնելու իրենց մեթոդական և մասնագիտական աշխատանքները:

դ) Աջակցել ուսուցիչներին տիրապետելու գնահատման համակարգին, կիրառել ուսուցանող գնահատում և գնահատման բնութագրիչները՝ օբյեկտիվ գնահատում իրականացնելու հաար:

ե)Զարգացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունները: Անվտանգ համացանցի կանոնների պահպանում,վերահսկողության իրականացում դպրոցում:

զ)Աջակցել ուսուցիչներին մասնակցելու ‹‹Տարվա լավագույններ›› մրցույթին և կամավոր ատեստավորմանը:

է) Նպաստել համընդհանուր ներառական կրթության գործընթացում ուսուցիչների կատարեկագործմանը, կարողունակությունների զարգացմանը:

ը)Նպաստել դպրոցում հեռավար կրթական ծառայությունների մատուցման, էլեկտրոնային պաշարներից օգտվելու, առցանց դասընթացներ կազմակերպելու աշխատանքներին:

Նպատակ 10 Նպաստել դասապրոցեսում և դասապրոցեսից դուրս նորարարությունների, կրթական այլ տեխնոլոգիաների և ՏՀՏ կիառությանը ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացմանը:
Խնդիր՝ ա)Սովորողների մոտ զարգացնել տեղեկատվական և հաղորդակցական կարողություններ: բ)Սովորողներին մղել նախագծային, ստեղծագործական, հետազոտական, ինքնուրույն աշխատանք կատարելու և առաջացնել հետաքրքրություններ քննարկվող նյութի շուրջ: գ) Խթանել և աջակցել ՀՊՉ-ով նախատեսված կրթության պահանջի իրականացմանը, այն է ոչ թե սովորողներին հնարավորինս շատ գիտելիքներ տալ, այլ սովորեցնել ինքնուրույն սովորել, ոչ միայն իմանալ, այլ նաև կարողանալ գործել ստացված տեղեկատվության հետ:
Գործողություններ՝ 1) Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդրում դասապրոցեսում: 2)Ուսուցիչների մասնագիտական որակների, շարունակական բարելավում և արդիականացում, մեդիագրագիտության կարևորում ու զարգացում: 3)Անվտանգ համացանցի կանոնների պահպանում, վերահսկողության իրականացում տանը և դպրոցում: 4)Ժամանակակից կրթական

պահանջներին համապատասխան սովորողների մոտ զարգացնել նորի և նորարարության հանդեպ ճկունություն և գործողություններում հարմարվելու, զգացմունքները կառավարելու և ճիշտ տեղեկատվություն ընտրելու կարողություն: 5)Հնարավորություն ստեղծել դպրոցում հեռավար կրթական ծառայությունների մատուցման, էլեկրտոնային պաշարներից օգտվելու, առցանց դասընթացներ կազմակերպելու համար: 6)Լուսաբանել և քննարկել e-draft.am կայքում դրված ակտերը:

Նպատակ 11 Ապահովել Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կրթական տարբեր աստիճաններում սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:
Խնդիր՝ 1) Ձևավորել ՀՊՉ պահանջներին համապատասխան կարողունակ քաղաքացիներ, ովքեր կլինեն մասնագիտորեն կողմնորոշված, մրցունակ և սոցիումին ինտեգրված: 2)Կիրառել նոր գնահատման համակարգը, օգտագործել բնութագրիչները, պահպանել օբյեկտիվության: 3) Ամենօրյա աշխատանքում զարգացնել առանցքային ութ կարողունակությունները, ապահովել վերջնարդյունքները:
Գործողություններ՝ 1)Կազմակերպել սեմինար–քննարկումներ չափորոշչային պահանջները յուրացնելու, նոր գործիքակազմը կիրառելու նպատակով, ուսուցիչների հաջողված արդյունքները ի ցույց դնել բոլոր

մանկավարժներին:

2)Կազմակերպել երկարօրյա ուսուցում ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար:

3)Դպրոցում պահպանել սոցիալական արդարություն, առաջնորդվել մարդու իրավունքների պաշտպանության, կրթության բարձր որակի հավասար հասանելիության և մատչելիության սկզբունքներով:

4)Մշտադիտարկումներ՝ վերջնարդյունքների ապահովման դիտարկում, մնացորդային գիտելիքի ստուգում, հայտորոշիչ և ստուգիչ աշխատանքներ:

5)Դպրոցում զարգացնել նախագծային աշխատանքներ կատարելու, հետազոտական աշխատանքներ իրականացնելու կարողունակություններ:

6)Սովորողների և մանկավարժների մոտ զարգացնել ճկունություն կրթական գործընթացում, առօրյա կյանքում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում օպերատիվ փոփոխությունների և արագ արձագանքման կարողունակություններ:

7) Տարեկան թեմատիկ և օրվա դասի պլանավորում կատարելիս մղել ուսուցիչներին առաջնորդվել Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչով և ապահովել պահանջվող կանոնները:

8)Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացը բարելավելու, գնահատում իրականացնելու և նոր նպատակներ պլանավորելու համար շարունակել կիրառել հետևյալ մեխանիզմները՝ ինտենսիվ դասալսումներ, տնօրինության կողմից ստուգիչ աշխատանքներ, չափորոշչային պահանջները բավարարող ինտեգրված, ցուցադրական, բաց դասեր, դասավանդման որակի

գնահատում, նախագծային աշխատանք, ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունների վրա կատարել վերլուծություններ, մշակել նոր ռազմավարություն, խթանել սահմանված պարտադիր խմբակներերի աշխատանքը ‹‹Առողջ ապրելակերպ››, ‹‹Մասնագիտական կողմնորոշում›› սովորողի կարիքներից ելնելով պլանավորել նորերը:

9)Գործընկեր դպրոցների հետ համագործակցելով կազմակերպել աշակերտական կոնֆերանսներ, նախագծային աշխատանքներ, փորձի փոխանակման տարբեր միջոցառումներ:

Նպատակ **12** Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում, քաղաքացիական հասարակության ակտիվ քաղաքացու ձևավորում: Դպրոցում բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային միջավայրի շարունակական կատարելագործում:
Խնդիր՝ 1) Ստեղծել այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժը համատեղ գործողություններ կատարելու, որոշումներ ընդունելու և նպատակին հասնելու համար: 2)Դաստիարակել հայ, ով բազմազգ մոլորակում գիտակցի իր ազգային յուրահատկությունը ու մշակույթի բացառիկությունը և ձևավորել անհատականություն, ով կգիտակցի հայրենիքի և պետականության

արժեքը, զարգացնել կամավորության, առաջնորդության, մասնակցայնության արժեքներ կրող քաղաքացիներ: 3) Իրականացնել նորարարական ծրագրեր կրթության որակի բարելավման , սովորողների հետաքրքրությունն ու սերը դեպի ուսումը խթանելու համար:
Գործողություններ՝ 1) Դպրոցում սահմանել վարքագծի նոր կանոններ, կանոնների կազմմանը մասնակից դարձնել բոլոր աշակերտներին: 2)Մշտադիտարկման կենտրոնում պահել դպրոցի բարոյահոգեբանական միջավայրը, ուսուցչի բարձր էթիկան, մարդկային փոխհարաբերությունները: 3) Դպրոցի կողմից բոլոր երեխաների նկատմամբ տածել սեր ու հարգանք, կատարելագործել համերաշխ, հանդուրժողական, բազմակարծիք, ներառական, մասնակցային կարթական միջավայրը: 4) Կրթական բոլոր սուբյեկտների՝ աշակերտուսուցիչ-ծնող, համար ապահովել ազատ կարծիք արտահայտելու, հարցադրումներ, առաջարկություններ անելու միջավայր: 5) Մշտադիտարկման միջոցով զարգացնելել սովորողների թիմում աշխատելու, որոշումներ կայացնելու, ընդհանուր նպատակին հասնելու կարողունակություններ: 6) Սովորողների մասնագիտական կողնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում: 7) Հանրակրթության պետական չափորոշչային պահանջներին համապատասխան նվազագույն շեմը չհաղթահարող աշակերտների

համար լրացուցիչ աշխատանքների, երկարօրյա դասընթացի կազմակերպում:

8) ԿԱՊԿՈՒ սովորողների համար խելացի հարմարությունների, վերաբերմունքի, սոցիալական ու ֆիզիկական միջավայրի բարելավում, անհատական ուսուցման պլանների միջոցով ուցուցման կազմակերպում, բարելավում:

9)Ընթերցասրահի կահավորում, առանձին դասերի անցկացման, հետաքրքրությունը ուսման և ընթերցանության նկատմամբ խթանելու համար:

10) Տարաբնույթ աշխատանքների միջոցով (նախագծային, հետազոտական, լաբորատոր, գործնական և այլ աշխատանքներ, ուսումնական ֆիլի դիտում, քննարկում, արշավներ, էքսկուրսիաներ, դպրոցական գիտաժողովներ, սեմինարներ, փոխներգործուն մեթոդներով դասեր) սովորողների հետաքրքրության խթանումը հանրակրթական առարկաների նկատմամբ:

11) Համալրել ռեսուրս-կենտրոնը, գրադարանը նոր նյութերով, (զարգացնող խաղեր, մեթոդական ամսագրեր, պաստառներ, դիդակտիկ պարագաներ, էլեկտրոնային կրթական նյութեր, առարկայական, լրացուցիչ ծրագրեր և այլն):

Նպատակ 12

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների նոր գործիքների կիրառում:

Խնդիր՝ 1)Կատարել մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրություն և վերլուծություն, 2) Մշակել աշխատակազմի խրախուսման նոր ձևեր և մեթոդներ
Գործողություններ՝ 1)Մանկավարժների համար դպրոցում ստեղծել խրախուսման մեխանիզմներ՝ կախված նրա ծավալած գործունեությունից և կատարած աշխատանքից: 2)Գործածության մեջ դնել ինքնագնահատման հարցաթերթիկը, կատարել վերլուծություններ: 3)Դպրոցի տեսանելի հատվածում ստեղծել աշխատակազմի խրախուսման, նվաճումների ու ձեռքբերումների պատ:

Նպատակ **13** Ունենալ ֆինանսատնտեսական գործունեության բազմակողմանի ուղղություններով գործողությունների պլան՝ իր մեջ ներառելով կրթության շահագրգիռ կողմերի:
Խնդիր՝ 1)Մասնակցել դրամաշնորհային ծրագրերի, 2)խորացնել համագործակցությունը համայնքի և համայնքապետարանի հետ, հանդես գալ համատեղ ծրագրերով:

3)գտնել հովանավորներ:
Գործողություններ՝ 1)Ակտիվ մասնակցել պետբյուջեից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերի, դրամաշնորհներին: 2)Իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը

<<Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 9- րդ ենթակետի համաձայն դպրոցի զարգացման ծրագրի կատարման վերահսկումը դպրոցի խորհրդի օրենսդրական պարտականությունն է: Արդյունքների գնահատումը պլանավորվում է կատարել այսպես՝

- ծրագրի պարբերաբար վերանայում և համապատասխան փոփոխությունների ներկայացում կառավարման խորհրդին
- հավանություն ստանալու,զարգացման ծրագրի հիման վրա միջնաժամկետ (մեկ տարվա համար նախատեսված) աշխատանքային պլանի կազմում,
- ծրագրիիրականացման ուղղությամբ կատարված
- աշխատանքների վերլուծություն, վերլուծության արդյունքում միջոցառումների վերանայում, այդ ուղղությամբ
- մանկավարժականխորհրդիառաջարկությունների քննարկում,
- մշակված միջոցառումների փոփոխություն և հարստացում,

- ներդպրոցական գնահատման վերահսկողության իրականացում,
- ուսուցիչների, ծնողների, աշակերտների հարցումներ,
- ցուցանիշների համեմատություն, հաշվետվությունների կազմում, հաշվետվությունների հասանելիություն շահառու մարմիններին (պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, ծնողներ, աշակերտներ, համայնք և այլն), ընթացիկ աշխատանքների և արդյունքների վերաբերյալ բովանդակային տեղեկատվություն դպրոցի կայքի հայտարարությունների բաժնում, ծրագրի իրականացման տարեկան ամփոփում և արդյունքների ներկայացում դպրոցի կառավարման և մանկավարժական խորհուրդներին:

Ակնկալվող արդյունքները

Դպրոցի զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները.







ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի վերահսկողությունը պետք է իրականացնել ծրագրում նախապես մշակված միջոցառումների միջոցով: Ծրագրի իրականացման վերահսկողությունը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված հաստատության գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Ծրագրի վերահսկողությունն իրականացնում է այն հավանության արժանացրած կառավարման խորհուրդը:

Դպրոցի տնօրենը յուրաքանչյուր գործառույթի իրականացման կամ չիրականացման (ոչ լիարժեք իրականացման) վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Դպրոցի կառավարման խորհրդին՝ ըստ գնահատման չափանիշների և հաշվետվություններ կայացման ժամկետների: Յուրաքանչյուր տարի Դպրոցի տնօրենը կառավարման խորհրդին է ներկայացնում ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը, որը ներառում է ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման վերաբերյալ չափելի տեղեկատվություն: Դպրոցի կառավարման խորհուրդը կատարված աշխատանքը գնահատում է՝ արդյունքները արձանագրելով: Բացասական կամ ոչ լիարժեք արդյունքների դեպքում սահմանում է թերությունների

վերացման ժամկետ, որի ավարտից հետո արձանագրում է կատարողականի վերջնական գնահատականը:

Ծրագրի կատարման ընթացքում, ըստ անհրաժեշտության, կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են դպրոցի կառավարման խորհրդի հավանությանը: Ծրագիրը մշտադիտարկվում և քննարկվում է մանկավարժական խորհրդի և ծնողական խորհրդի կողմից: Ծրագրի իրատեսությունը և նրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները դրվում են խորհրդակցական մարմինների քննարկմանը:

Այսուհետ դպրոցի կայքէջը, ինչպես նաև դպրոցի ֆեյսբուքյան էջը ակտիվորեն և լիարժեք կծառայեն որպես իրազեկման, համագործակցության և լուսաբանման հարթակներ:



ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Միջոցառում/	Ակնկալվող	Սահմանված	Կատարված	Սահմանված	Զարգացման ծրագրում	Նշում

գործողություն	արդյունք	ժամկետ	աշխատանքի նկարագրություն	ժամկետում միջոցառման/գործողության չկատարման կամ մասնակի կատարման/առկայության դեպքում/պատճառները	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	մեր

Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ:

Եզրափակում

«Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»: Նելսոն Մանդելա Որպես հայ մարդ և մանկավարժ՝ մեծագույն ցանկությունս է, որ դպրոցն արժանի լինի իր կոչմանը, ուսուցիչը՝ գնահատված իր վաստակով, շրջանավարտը՝ բազմակողմանի զարգացած, մրցունակ անհատ, հասուն քաղաքացի, բարձր արժեքների կրող, ով պատրաստ է ազնվորեն ծառայելու իր հայրենիքին և լինելու նրա զարգացման և հզորացման երաշխավորը: